Վերապատրաստվող ուսուցչի հետազոտական աշխատանք

Առարկա՝ Աշխարհագրություն

Թեմա՝ Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրները

ՀՀ Արարատի մարզի Լուսառատի միջն. դպրոցի ուսուցչուհի՝ Լուսինե Ստեփանյան

Դասախոս՝ **Աշոտ Խաչատրյան**

Լեռի անվան N65 դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

- Ներածություն 3
- Ժողովրդագրական հիմնախնդրի էությունը զարգացող (վերարտադրության 2-րդ տիպ) երկրներում..... 4
- Ժողովրդագրական հիմնախնդրի էությունը զարգացած (վերարտադրության առաջին տիպ) երկրներում..... 6
- Ժողովրդագրական իրավիճակը Հայաստանի հանրապետությունում 8
- Եզրակացություն 9
- Օգտագործված գրականություն 10

Ներածություն

Ժողովրդագրական հիմնախնդրի էությունը առաջին հերթին կապված է բնակչության բարձր աճի տեմպի հետ: Եթե նախկինում բնակչության նկատմամբ մեծ կախվածության պատճառով աշխարհի բնակչությունը դանդաղորեն էր աճում, ապա այժմ, կապված առողջապահության զարգացման մեծացել է մարդկանց կյանքի միջին տևողությունը: Եթե մեր թվարկության սկզբին աշխարհի բնակչությունը կազմում էր մոտ 250 միլիոն մարդ, ապա այժմ կազմում է ավելի քան 8 միլիարդ մարդ:

Երկիր մոլորակի վրա ներկայումս բնակչության թիվն աճում է արագ տեմպերով: Բնական աճը 1,1% է, դա նշանակում է, որ երկրագնդի վրա ամեն տարի ավելանում է 80-85 մլրդ. մարդ:

Գլոբալ ժողովրդագրական հիմնախնդիրը դրսևորվում է հետևյալ միտումներով.

- բնակչության արագ աճը (տարածքների գերբնակեցում)
- ավելանում է սովյալների, անտունների, գործազուրկների թիվը
- ավելանում է մարդկանց կուտակումը խոշոր քաղաքներում
- մեծանում է ճնշումը բնության վրա, որի հետևանքով վատթարանում է բնական միջավայրի որակը, նվազում են բնական պաշարները, շատանում են հիվանդությունները

Համամոլորակային հիմնախնդիրները արդիականության համամարդկային խնդիրներն են, որոնք շոշափում են ներկա և ապագա սերունդների կենսական շահերը, և որոնց լուծումը պահանջում է բազմաթիվ պետությունների համատեղ ջանքերը:

Ժողովրդագրական հիմնախնդիրը էականորեն տարբեր է զարգացած և զարգացող պետություններում: Եթե զարգացող պետություններում հիմնական նպատակը ծնելիության նվազումն է, ապա զարգացած պետություններում ընդհակառակը խրախուսվում է ծնելիությունը, քանի որ այս պետություններում դիտվում է ժողովրդագրական ճգնաժամ:

Ժողովրդագրական հիմնախնդիրը համարվում է համամոլորակային և կարևորագույն, քանի որ դրա լուծումից կախված է համամոլորակային այլ հիմնախնդիրների լուծումը:

Ժողովրդագրական հիմնախնդրի դրսևորումը զարգացող (վերարտադրության 2-րդ տիպ) երկրներում

Ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրների հիմքում երկրագնդի տնտեսական, սոցիալական, բնապահպանական պահանջների ու հնարավորությունների չարաշահման է՝ պայմանավորված բնակչության թվի արագ աճով, որն իր հերթին ավելացնում է սովյալների, անտունների, գործազուրկների թիվը, կուտակումները խոշոր քաղաքներում, ավելանում են հիվանդություններ:Այս ամենը հանգեցնում է բնական միջավայրի որակի անկմանը:

Վերարտադրության երկրորդ տիպի երկրներին բաժին է ընկնում աշխարհի տարեկան աճի 90% -ից ավելին:

Այդ երկրների տնտեսական և սոցիալական զարգացումն արագացնելու, դրա միջոցով սովյալների ու աղքատների թիվը կրճատելու և բնական միջավայրը բարելավելու ջանքերը հաճախ ցանկալի արդյունք չեն տալիս:Բնակչությունը շարունակում է ավելի արագ աճել, քան տնտեսությունն ու պարենամթերքի արտադրությունը:

Հիմնախնդրի լուծման գլխավոր միջոցը մնում է ծնելիության կրճատման միջոցով բնական աճի կրճատումը,այլ կերպ ասած՝ ընտանիքի պլանավորումը:Դրան էլ ուղղված է այդ երկրների ժողովրդագրական քաղաքականությունը:Այս առումով առանձնանում են Չինաստանը և Հնդկաստանը, որտեղ կենտրոնացված է աշխարհի բնակչության ավելի քան 1/3-ը: Տարվող քաղաքականության շնորհիվ բնակչության ընդլայնված վերարտադրության տեեմպերը որոշակիորեն թուլացել են:

Զարգացող երկրներում <<ժողովրդագրական պայթյունը>> դեռևս շարունակվում է և իր բացասական ազդեցությունն է թողնում ոչ միայն այդ երկրների, այլև համաշխարհային տնտեսության վրա՝ դժվարացնելով պայքարն աղքատության և հետամնացության դեմ: Նշված երկրներն աչքի են ընկնում երեխաների բարձր տեսակարար կշռով (30-40%), որը նշանակում է, որ բնակչության բարձր բնական աճը շարունակելու է բարձր մնալ մոտակա 1-2 տասնամյակներում:

Հաճախ <<քաղաքային պայթյունով>>, որի պատճառով էլ մեծանում է նաև քաղաքային բնակչության արագ աճի քաղաքաշինական, սոցիալ-տնտեսական և էկոլոգիական բացասական հետևանքները:

Բնակչության վերարտադրության 2-րդ տիպը գերակշռում է Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի զարգացող երկրներում:Եթե այժմ աշխարհում միջին հաշվով մեկ ընտանիքում հաշվում է 3-4 երեխա, ապա Աֆրիկայի և Ասիայի հետամնաց ագրարային երկրներում 6-7 երեխա:

20-րդ դարի 2-րդ կեսից սկսած, այդ երկրները հնարավորություն ունեցան լայնորեն օգտագործելու ժամանակակից առողջապահության նվաճումները՝ առաջին հերթին համաճարակային հիվանդությունների դեմ պայքարը:Դա հանգեցրեց մահացության զգալի կրճատման, իսկ ծնելիությունը մնաց նախկինի՝ շատ բարձր մակարդակի վրա:Դրա հետևանքով բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներում 20-րդ դարի 2-րդ կեսից տեղի ունեցավ բնակչության թվի կտրուկ աճ:

Դեռևս 19-րդ դարի սկզբին անգլիացի տնտեսագետ Թոմաս Մաուլթսը անդրադարձել է ժողովրդագրական հիմնախնդրի և զարգացրել մի տեսություն, որը ստացել է <<Մալթուսի ազգաբնակչության տեսություն>> անվանումը: Նրա կարծիքով մարդիկ բազմանում են ավելի արագ, քան թույլ է տալիս առկա պարենի քանակը: Մալթուսը և նրա կողմնակիցները նշում էին, որ գերբնակեցման վերացման գործոնները համաճարակների, պատերազմների, ծնելիության կրճատման միջոցով բնակչության հավասարակշռության վերականգնումն է: Նրա հետևորդները, ովքեր մեր օրերում անվանվում են նեոմալթուսականներ, պնդում են, որ ներկայումս մարդկությանը սպառնում է ոչ այնքան ատոմային, որքան ժողովրդագրական ռումբը: Սակայն, իրականում գերբնակեցումը ոչ թե բացարձակ է, այլ հարաբերական: Այսինքն՝ սովը և աղքատությունը առաջացել է ոչ այնքան բնակչության մեծ թվի, որքան տնտեսության թույլ զարգացման հետևանքով:

Ժողովրդագրական հիմնախնդրի դրսևորումը զարգացած(վերարտադրության առաջին տիպ)երկրներում

Վերարտադրության առաջին տիպի երկրներում բնակչության բնական աճը շատ փոքր է կամ ընդհանրապես աճ չկա: Հաճախ վերարտադրությունը ընդհանրապես խախտվում է, բնակչության թիվը կրճատվում է և տեղի է ունենում ապաբնակեցում(դեպոպուլյացիա):Այդ պատճառով էլ շատ երկրներում տարածվում է ժողովրդագրական ճգնաժամ: Նկատվում է բնակչության ծերացման և տնտեսությունն անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներով ապահովվելու հիմնախնդիրը, որը մասամբ լուծվում է ներգաղթի հաշվին: Ներկայումս ժողովրդագրական ճգնաժամը դիտվում է ոչ միայն արևմտեվրոպական զարգացած երկրներում, այլև նախկին սոցիալիստական կամ արևելաեվրոպական գրեթե բոլոր երկրներում: Այս երկրներում բնակչության թվի կրճատումը լուրջ համապետական հիմնախնդիր է: Այդ պատճառով էլ այս երկրներում մշակում և իրագործում են ժողովրդագրական քաղաքականություն: Ծնելիության խթանման նպատակով արտոնություններ են նախատեսվում բազմազավակ ընտանիքների համար, երեխաներին լրացուցիչ արտոնություններ են տալիս և այլն: Ընտանիքի պլանավորման ծրագրեր են իրականացնում Գերմանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և մի շարք այլ երկրներ:

Ժողովրդագրական հիմնախնդիրների լուծման համար ամենաբարձր մակարդակով հստակ քաղաքականություն մշակվեց Ռուսաստանում: 2001 թվականին առաջադրանքներ դրվեցին Ռուսաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ, նշվեցին դրանց իրագործման մեխանիզմները: Այս առումով Ռուսաստանն իրոք անհանգստանալու հիմքեր ուներ: Տարեկան կտրվածքով բնական աճը բացասական էր 600 հազար մարդով, և նման շարունակության պարագայում, ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական քաղաքականության մասնագետների, 2025 թվականին նրա բնակչության թիվը կկազմեր 130 միլիոն, իսկ 2050 թվականին՝ 110 միլիոն մարդ, որը Ռուսաստանի նման

երկրի համար պարզապես կործանում է: Ուստի ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված քայլերից ելնելով՝ յուրաքանչյուր երկրորդ երեխայի պարագայում 400 հազար ռուբլու հատկացումը տվել է իր առաջին դրական արդյունքները: Արդեն իսկ 5 միլիոն ռուս ընտանիք օգտվել է մայրական կապիտալի տրամադրած դրամական միջոցներից: Բացի այս առաջին իսկ երեխայի ծնվելու պարագայում Ռուսաստանի Դաշնության կառավարությունը յուրաքանչյուր երեխայի համար ամսական մոտ 170 դոլարի համարժեք գումար է հատկացնում:

Ժողովրդագրական քաղաքականությունը հիմնականում տարվում է երեք ուղղություններով՝ տնտեսական, վարչաիրավական և դաստիարակչական ու քարոզչական:

Հիմք ընդունելով այն, որ ծնելիության մակարդակը սերտորեն կապված է երկրի տնտեսական զարգացման հետ՝ կարևոր լուծման ուղի է համարվում պետության տնտեսական զարգացմանը նպաստող միջոցառումների իրականացումը: Սա համարվում է հիմնախնդրի լուծման ինտենսիվ ուղի, որին հասնելը բավականին մեծ ջանքեր և միջոցներ է պահանջում:

Ժողովրդագրական իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում

1960-ական թվականներից բնակչության ծնելիության ցուցանիշը սկսել է նվազել: Այն նվազագույնի է հասել անցյալ դարի վերջին: Միևնույն ժամանակ բարձրացել է մահացության ցուցանիշը: Վերջին տասնամյակներում նկատելիորեն նվազել է նաև բնական աճի գործակիցը. ներկայումս այն տատանվում է 0,4% սահմաններում և գրեթե 2.5 անգամ ցածր է աշխարհի միջին ցուցանիշից: Եթե մի քանի տասնամյակ առաջ ՀՀ յուրաքանչյուր ընտանիքին բաժին էր ընկնում 3-4 երեխա, ապա ներկայումս սովորական են դառնում 1-2 երեխա ունեցող ընտանիքները: Վերջին երկու տասնամյակում ծնունդների թվի ավելացումը բացատրվում են մի շարք պատճառներով: Դրանցից են՝ գործազրկության և աղքատության աճը, երիտասարդ տղամարդկանց արտագաղթը, բնակչության ծերացումը, ամուսնությունների թվի կրճատումը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում ևս շրջանառության մեջ է դրվել ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագիրը, որով 1 միլիոն դրամ է նախատեսված յուրաքանչյուր երրորդ երեխայի ծննդյան համար: 2016-2018 թվականներին ժողովրդագրական իրավիճակի բարելավման քաղաքականության մեջ է ընդգրկված նաև երիտասարդ նորակազմ ընտանիքների մատչելի բնակարաններով ապահովելու միջնաժամկետ ծրագիրը:

Սակայն ընդունված հայեցակարգերը բավարար արդյունք չեն ապահովում, իսկ կյանքը ցույց է տալիս, որ հստակ ժողովրդագրական քաղաքականության բացակայությունը կարող է խիստ բացասական հետևանքներ ունենալ Հայաստանի նման փոքր երկրի համար, որը գտնվում է անկայուն աշխարհաքաղաքական գոտում, ունի ներքին և արտաքին բազմաթիվ լուրջ մարտահրավերներ: Իսկ սրա արդյունքում Հայաստանում արձանագրվում է այն իրողությունը, որ մեր երկիրը կարող է դասվել վերարտադրողականության տեսանկյունից անկարողունակ երկրների շարքին, որը կարող է սպառնալ ազգային անվտանգությանը:

Եզրակացություն

- Ժողովրդագրական հիմնախնդիրը վերաբերում է բոլոր երկրներին, քանի որ դրա հետևանքով առաջացած խնդիրները դրսևորվում են ոչ միայն առանձին երկրներում, այլև ամբողջ աշխարհում: Այդ պատճառով էլ ժողովրդագրական հիմնախնդիրն ունի համամոլորակային բնույթ և Միավորված ազգերի կազմակերպության ուշադրության կենտրոնում է:
- Բնակչության վերարտադրության կարգավորումը ժողովրդի բարեկեցության մակարդակը բարձրացնելու հիմնական նախադրյալն է: Ծնելիության և մահացության մակարդակը կարգավորվում է ոչ միայն կենսաբանական օրենքներով, այլև սոցիալական պայմաններով:
- Հիմնախնդրի լուծման գլխավոր միջոցը մնում է բնակչության վերարտադրության կարգավորումը և աճի դադարեցումը:
- Միայն երկրների տնտեսական և սոցիալ-մշակութային առաջադիմության պայմաններում է հնարավոր լուծել ժողովրդագրական համամոլորակային հիմնախնդիրը:
- Հիմնախնդրի և լուծման ուղիների վերաբերյալ հիմնահարցերը քննարկվել են 1984 թվականին Մեխիկոյում, 1994 թվականին Կահիրեում, ավելի ուշ ՄԱԿ-ի կողմից հրավիրված ազգաբնակչության հարցերով, այլ համաշխարհային խորհրդաժողովներում:

Օգտագործված Գրականություն

- Յու.Մուրադյան, Մ.Մուրադյան, մարդկության համամոլորակային հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները: Երևան 2014
- Մ.Մանասյան, Ա.Հովսեփյան, Ա.Պոտոսյան Աշխարհագրություն 12 Երևան 2018
- Աշխարհագրություն:Հայաստան:Հանրակրթական դպրոցի 9-րդ դաս. Դասագիրք մաս 1/ Մանասյան Մ., Հովսեփյան Ա.-Եր.: